ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

0064, Երևան, Ա. Բաբաջանյան 25
Հեռ. 74 11 12, 73 23 30
info@mskh.am, www.mskh.am

N 12-07-244
«30» 07. 2012թ.

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի նախարար.

«Ասպետ» ռազմա-հայրենասիրական բացման առիթով հուլիսի 13-ին և 14-ին Ձեզ հետ քննարկեցինք համագործակցության ընդլայնման ծրագրեր: Ձեռք բերված պայմանավորվածությունները կներկայացնենք Ձեզ կոնկրետ առաջարկների տեսքով:

Ներկայացնում ենք ՀՀ ԿԳ նախարարության պատվերով կրթահամալիրում իրականացվող «Փորձարարական մանկավարժության ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրով կազմակերպվող մեդիաօլիմպիադայի աշնանային ճամբարը միասին կազմակերպելու առաջարկը: Ճամբարը կգործի աշնանային արձակուրդի օրերին՝ 2012թ. հոկտեմբերի 23-27-ին, Վանք գյուղում՝ «Գանձասար» ճամբարում և գյուղի դպրոցում, որպես ստեղծագործական հավաք: Հավաքի մասնակիցները՝ շուրջ 100 մարդ, կլինեն հայագիտական, ռազմա-մարզական, հայրենագիտական, էկոլոգիական, տեխնիկական ստեղծագործության պատանեկան գործող ակումբների անդամներ կրթահամալիրից, Երևանի, ՀՀ մարզերի և արցախյան դպրոցներից, նրանց ուսուցիչներ, ղեկավարներ: Ճամբարի ընթացքում կմշակվի «Պատանիների ոչ ֆորմալ կրթության ծրագրեր և կազմակերպում» թեման:

Հավաք-ճամբարի հետ կապված տրանսպորտային ծախսերը նախատեսում ենք հոգալ բարեգործական միջոցներով, մասնակիցների սննդի և ուսուցման ծախսերը՝ Ծրագրի միջոցներով:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը՝ սկսելու համար հավաք-ճամբարի նախապատրաստական աշխատանքը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝ **Ա. ԲԼԵՅԱՆ**

Կապ.՝ Ս. Մարկոսյան
Հեռ. 74 72 46